Funded by the European Union

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ

2026

Սույն հրապարակումը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ազորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Կոմպասս» գիտահետազոտական,կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Թափանցիկության և մասնակցային վերահսկողության խթանում ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում մոնիթորինգի և վերլուծության միջոցով» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Կոմպասս» գիտահետազոտական,կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

4 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ 2026թ.

7 ԲՅՈՒՋԵ

9 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2026թ. ԲՅՈՒՋԵ

10 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

- «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով ՀՀ 2026թ-ի պետական բյուջեն եկամուտների գծով հաստատվել է 3.09 տրիլիոն դրամի, ծախսերի գծով՝ 3.63 տրիլիոն դրամի չափով: Պետական բյուջեի դեֆիցիտը սահմանվել է 536.8 մլրդ դրամի չափով:
- Բարձրագույն կրթությանն ուղղված ծախսերը պետական բյուջեում ներկայացված են բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրով, որոնք համակարգվում են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) կողմից:
- 2026 թվականին պետական բյուջեից բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրին նախատեսված է հատկացնել 13.3 մլրդ դրամ
- Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի բյուջեի կառուցվածքը կենտրոնացած է 14 միջոցառումների վրա:
- Ֆինանսավորման ծավալով բարձրագույն կրթության միջոցառումների շարքում գերակշռողը բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման միջոցառումն է, որին հատկացվել է 10.07 մլրդ դրամ:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՒ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)





2026թ.-ի Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի ֆինանսավորումը կազմում է 13.3 մլրդ դրամ:

2026թ.-ի համար նախատեսված 13.3 մլրդ դրամ ֆինանսավորումը արդեն էական շեղում է նախորդ տարիների համեմատ:

2025թ.-ի նկատմամբ այն նվազել է մոտ 0.86 մլրդ դրամով կամ շուրջ 6.1%-ով: Եթե համեմատենք

2024թ. ամենաբարձր ցուցանիշի՝ 14.64 մլրդ դրամի հետ, ապա նվազումը կազմում է մոտ 1.34 մլրդ դրամ կամ շուրջ 9.1%:

2023թ. մակարդակի համեմատ 2026թ. ֆինանսավորումը ցածր է մոտ 5.3%-ով:

Բարձրագույն և հետբուհական կրթության կշիռը ՀՀ 2026թ. պետական բյուջեում



Բարձրագույն և հետբուհական կրթության կշիռը ԿԳՄՍՆ 2026թ. բյուջեում



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրային դասիչը	Ծրագրի /միջոցառման անվանումը	2026թ. (հազար դրամ)
1111 - 11001	Ակադեմիական փոխճանաչման ֆ շարժունության ծառայություններ	43,113.5
1111 - 11003	Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ	59,989.5
1111 - 11007	Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ	45,010.7
1111 - 12001	Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	937,060.0
1111 - 12002	Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում	532,188.0
1111 - 12003	Ասպիրանտական կրթաթոշակներ գիտական հաստատություններում սովորողներին	89,040.0
1111 - 12004	Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	10,072,844.5
1111 - 12005	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում	499,228.0
1111 - 12006	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում	35,586.2
1111 - 12007	Երյանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին, կեցության վարձավճարի փոխհատուցում մարզաբնակ ֆ օտարերկրյա ուսանողներին	41,335.9
1111 - 12008	Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում	66,300.0
1111 - 12011	2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Ղարաբաղից բռնի տեղահանված ֆ ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում	440,237.5
1111 - 12012	Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ՀՀ բարձրագույն ֆ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում	469,605.0

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ

Միջոցառումն ուղղված է ավարտական փաստաթղթերի ու դիպլոմների փոխճանաչման վկայականների խորհրդատվության տրամադրում՝ հիմնվելով Եվրոպական կրթական չափորոշիչների վրա:Միջոցառմանը հատկացվել է **43.1** մլն դրամ:

Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ

Միջոցառումն ուղղված է Բարձրագույն կրթական ուսումնական հաստատությունների հավատարմագրում, հավատարմագրման չափանիշների մշակում, վերանայում, մշտադիտարկումների իրականացում, ծրագրային հավատարմագրման ոլորտային չափանիշների մշակում:Միջոցառմանը հատկացվել է մոտ **59,9**մլն դրամ:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ

Միջոցառումն ուղղված է Բոլոնիայի գործընթացի շրջանակներում նախարարական համաժողովների ընթացքում ստորագրված փաստաթղթերից բխող բարեփոխումներին միտված գործողությունների իրականացում:Միջոցառմանը հատկացվել է մոտ **45.01 մլն** դրամ:

Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ

Միջոցառումն ուղղված է բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ:Միջոցառմանը հատկացվել է մոտ **937.06 մլն** դրամ:Կրթաթոշակ ստացող ուսանողների միջին տարեկան թիվ**, 11568 մարդ**:

Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում

Միջոցառումն ուղղված է հետբուհական մասնագիտական կրթության գծով կրթաթոշակի տրամադրում:Միջոցառմանը հատկացվել է մոտ **532,1** մլն դրամ:Կրթաթոշակ ստացող ուսանողների միջին տարեկան թիվ**,954** մարդ**:**

Ասպիրանտական կրթաթոշակներ գիտական հաստատություններում սովորողներին

Միջոցառումն ուղղված է կրթաթոշակներ գիտական հաստատություններում ասպիրանտական կրթության մեջ գտնվող անձանց:Միջոցառմանը հատկացվել է **89,04** մլն դրամ:Կրթաթոշակ ստացող ուսանողների թիվ**, 124** մարդ:

Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում

Միջոցառումն ուղղված է բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների նպաստների տրամադրումը:Միջոցառմանը հատկացվել է մոտ **10,07** մլրդ դրամ:Նպաստներ ստացող ուսանողների թիվ **11794** մարդ,ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների թիվ**, 1000** մարդ

Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում

Միջոցառումն ուղղված է հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրումն է :Միջոցառմանը հատկացվել է մոտ **499,2** մլն դրամ:Ուսանողական նպաստներ ստացողների միջին տարեկան թիվ**, 1088** մարդ:

Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում

Միջոցառումն ուղղված է գիտական կադրերի պատրաստման համար նպաստների տրամադրումը:Միջոցառմանը հատկացվել է մոտ **35,6** մլն դրամ:Ուսանողների միջին տարեկան թիվ**, 160** մարդ

Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին, կեցության վարձավճարի փոխհատուցում մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներին

Միջոցառումն ուղղված է ուսանողներին զեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրում :Միջոցառմանը հատկացվել է մոտ **41,3** մլն դրամ:Հանրակացարանում բնակվող ուսանողների թիվ**, 250** մարդ:

Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում

Միջոցառումն ուղղված է ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում՝ **2** տոկոսային կետի չափով**,** բարձր առաջադիմության դեպքում **3** տոկոսային կետի չափով:Միջոցառմանը հատկացվել է մոտ **66,3** մլն դրամ:Ուսանողների միջին տարեկան թիվ**, 10013** մարդ

2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում

Միջոցառումն ուղղված է **2023** թվականի սեպտեմբերի **19-**ից հետո Ղարաբաղից բռնի տեղահանված և **ՀՀ-**ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին կրթաթոշակի տրամադրում:Միջոցառմանը հատկացվել է մոտ **440,2** մլն դրամ:

Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում

Միջոցառումն ուղղված է մինչև **2023** թ. սեպտեմբերի **19-**ը ՀՀ բարձրագույն և հետբուհ. մասնագիտ.կրթ. ծրագրեր իրականացնող ուս.հաստատ-ի վճարովի ուսուց. համակարգում ընդգրկված Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիք. ուսանող-ն ուսման վարձի փոխհատուց. նպատ. ուսանող. նպաստիտրամադրում:Միջոցառմանը հատկացվել է մոտ **469,6** մլն դրամ:Ուսման վարձի փոխհատուցում ստացող ուսանողների թիվ**, 676** մարդ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ֆինանսավորման ծավալով՝ բարձրագույն կրթության միջոցառումների մեջ գերակշռող տեղը զբաղեցնում է բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման միջոցառումը, որի համար Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի 13.3 մլրդ դրամից հատկացվել է 10.07 մլրդ դրամ, ինչը կազմում է ծրագրի ընդհանուր բյուջեի մոտ 76%: